



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՇԵՆԻԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հասցե՝ Գ.Շենիկ Մանուկ Մելքոնյան 1
Էլ.հասցե՝ shenik.armavir@mta.gov.am
Հեռ. 093-07-28-90

ԹԻՎ 15

25. 01. 2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Կից ուղարկվում է ՀՀ Արմավիրի մարզի Շենիկի գյուղական համայնքի ղեկավարի
2017 թվականի տարեկան հաշվետվությունը:

ՇԵՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Կ.ՄԻՆԱՍՅԱՆ

Կատ.՝ Ս.Կիրակոսյան

ՀՀ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԵՆԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ.ՄԻՆԱՍՅԱՆԻ
2017Թ. ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մասնակցությամբ՝ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՍ բաժնի պետ՝ Գ.Հովհաննիսյանի, համայնքի ավագանու և 25 բնակիչների.

25.01.2018Թ.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շենիկի գյուղական համայնքի ղեկավարը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նրանից բխող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին», ՀՀ օրենքով, համայնքի ղեկավարի աշխատակազմի, ավագանու և գյուղապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում ՚իր լիազորությունները: 2017թ. գյուղապետարանի աշխատանքային ծրագրի հիմքում դրված են եղել համայնքի սոցիալտնտեսական զարգացման գերակա ուղղությունները:

Այս խնդիրների լուծման համար կարևորագույն պայման է հանդիսացել Արմավիրի մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի և համայնքի ավագանու ամենօրյա հոգատար վերաբերմունքը և համայնքի խնդիրների լուծմանն աջակից լինելու պատրաստակամությունը, որի արդյունքում արձանագրվել է որոշակի հաջողություններ, որոնք ըստ բնագավառների ներկայացնում են Ձեզ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ԲՆԱԳԱՎԱՐ

2017թվականի երաշտը զգալի վնաս տվեց գյուղատնտեսությանը, սակայն համայնքում ուշադրության կենտրոնում է եղել աճեցրած բերքը, իրացման աշխատանքները, գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ պայքարի միջոցառումները:

Բանկչության կողմից կատարվել է 105 հա հացահատիկային կուլտուրաների մշակում:

Համայնքում հիմնվել է 30.0հա ինտենսիվ այգի«ՄՊԱՅԿԱ» ընկերության կողմից, ստեղծվել է մոտ 30 աշխատատեղ, ինչպես նաև ձեռք է բերվել վերջիններիս կողմից ևս 150հա հողատարածք այդ նպատակով:

Համայնքի բնակիչները հիմնականում զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ:

ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՐ

Համայնքի կենտրոնում կառուցվել է երկու հարմարավետ զրուցարան, որտեղ իրենց հանգիստն են անցկացնում համայնքի բնակիչները:

Գյուղապետարանի միջոցներով մանկապարտեզի համար ձեռք է բերվել խոհանոցային կահույք, փոխվել են մանկապարտեզի և գյուղապետարանի շենքերի պատուհանների մի մասը:

«ՀԷՑ» ՓԲԸ – ի կողմից բետոնյա հենասյուններով և նոր հաղորդալարերով փոխարինվել են համայնքի էլեկտահաղորդման հին փայտյա հենասյունների մի մասը և հաղորդալարերը,:

Ավարտվել է համայնքի հիմնական մասի փողոցային լուսավորության նոր գծերի կառուցումը մոտ 2 կմ երկարությամբ, որը կատարվել է համայնքի և «ՎիվաՄել» ՄՏՍ-Ի ու Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի ֆինանսավորմամբ:

Պարբերաբար իրականացվում է աղբահանության և մաքրման աշխատանքներ:

ՀՀ կառավարության և Մարզպետարանի ֆինանսավորմամբ ավարտվել է համայնքի մշակույթի տան 1-ին և 2-րդ հարկերի ներքին հարդարանքը ամբողջությամբ՝ մոտ 19 մլն. դրամի չափով, իսկ մյուս մասը կավարտվի 2018թ-ին:

**ՀՈՂԱՑՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌ**

Ամենօրյա աշխատանք է տարվում հողօգտագործողների հետ հողի հարկի, գույքահարկի գծով գոյացած ապառքների հավաքագրման գործում:
Միստեմատիկ տեղեկատվություն է ներկայացվում անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանում՝ սեփականության իրավունքի գրանցման վկայականներում ճշտումներ կատարելու վերաբերյալ:

**ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍՍՈՐԴՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌ**

Շենիկ համայնքում գործում է 1 միջնակարգ դպրոց:
Գործում է 1 մանկապարտեզ 2 խմբով:
Կրթության որոշ գտնվում է բարձր մակարդակի վրա:
Գործում է գրադարան, այն որոշ չափով վերանորոգված և կահավորված է, ունի 5150կտոր գրականություն և պարբերաբար ավելացվում է քանակը:

Համայնքում նշվել են բոլոր տեսակի տոները՝ ՀՀ բանակի օր, մարտի ութ, սուրբ զատիկ, ամանոր և այլն:

Բուժ.ամբուլատորիան կահավորված է սարքավորումներով, համայնքի բնակչության բուժ. սպասարկումը իրականացվում է ժամանակին և անթերի, նախատեսվում է ավելի ընդլայնել բուժամբուլատորիայի տարածքը: Ցանկալի կլինեք համայնքն ունենար առանձին բուժամբուլատորիա:

Համայնքում գործում է «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողով, որի հիմնական խնդիրը թափառաշրջիկ, անօթևան երեխաների հայտնաբերումն ու դաստիարակումն է: Ի ուրախություն մեզ համայնքում նման երեխաներ չկան:

Համայնքում ուշադրության կենտրոնում են գտնվում զոհված ազատամարտիկների և սոցիալապես անապահով անձանց ընտանիքները, որոնց տրվում է նաև ֆինանսական օգնություն:

Ազգաբնակչության նկատմամբ իրականացվում է ճիշտ և ժամանակին հաշվառում, մշտապես ընթացք է տրվում բնակչության հուզող առօրյա խնդիրներին:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության բնագավառում ժամանակին և անթերի իրականացվում է զորակոչը, բնակչության շրջանում իրականացվում է ռազմահայրենասիրական դաստիարակություն:

Համայնքը արդեն գազաֆիկացված է և աստիճանաբար ավելանում են բաժանորդները:

Համայնքում զորակոչից խուսափողներ չկան:

Համայնքում գործում է մեկ չորանոց և երեք ՀԷԿ - էր, որտեղ աշխատում են համայնքի բնակիչներից:

Ավարտվել է արևային էլ. էներգիայի նոր կայանի կառուցումը, որը կրկին աշխատատեղեր է բացում բնակիչների համար:

Հաշվետու ժամանակահատվածում համայնքում դատապարտված անձինք չեն եղել:

Համայնքում գործում է ֆուտբոլի խմբակներ, որոնք մասնակցում են տարբեր առաջնությունների:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2017թ. տարեկան կտրվածքով հավաքագրվել է եկամուտներ՝

հազար դրամ

| h/h | Եկամուտների անվանումը | ալան | փաստացի | Կատարողական % |
|-----|--------------------------------------|----------------|----------------|---------------|
| 1. | Հողի հարկ | 7265.0 | 7530.3 | 103.7 |
| 2. | Գույքահարկ | 1100.0 | 1701.1 | 154.6 |
| 3. | Տեղական տուրք | 50.0 | 79.7 | 159.4 |
| 4. | Հողի վարձավճար | 1000.0 | 1145.5 | 114.6 |
| 5. | Այլ մուտք /տեղական վճար սուբսիդիա/ | 700.0 | 763.0 | 109.0 |
| 6. | Դոտացիա | 10899.0 | 10899.0 | 100 |
| 7. | Այլ դոտացիա | | | |
| 8 | Ինքնակամ կառույցի օրինականացման վճար | | 82.2 | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ Վ/Բ | 21014.0 | 22200.0 | 105.6 |
| 1 | Ֆ/Բ ազատ մնացորդ | 504.8 | | |
| 2 | Հողի օտարում | 5440.0 | 4940.0 | 90.8 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 26958.8 | 27645.6 | 102.5 |
| | Ընդամենը սեփական եկամուտներ | 10115.0 | 11301.8 | 111.7 |

2017թ. տարեկան կտրվածքով կատարվել է ծախսեր հետևյալ ուղղություններով՝

հազար դրամ

| | ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2017 ՏԱՐԵՎԱՆ | | |
|-----|--|--------------|---------|---------------|
| | | ՊԼԱՆ | ՓԱՍՏԱՑԻ | ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ % |
| 1. | Տեղական ինքնակառավարում | 11914.0 | 11856.5 | 99.5 |
| 2. | Մանկապարտեզ ՀՈԱԿ | 6450.0 | 6450.0 | 100 |
| 3. | Աղբահանություն | 650.0 | 650.0 | 100 |
| 4. | Գյուղատնտեսություն- հակակարկտային կայանի գազի ծախս | - | - | - |
| 5. | Սոց.օգնություն | 500.0 | 500.0 | 100 |
| 6. | Գրադարան | 875.0 | 873.4 | 99.8 |
| 7. | Մշակույթի տուն | 625.0 | 625.0 | 100 |
| 8. | ԸՆԴԱՄԵՆԸ Վ/Բ | 21014.0 | 20954.9 | 99.7 |
| 9. | Ֆ/Բ | 5944.8 | 4396.7 | 74 |
| 10. | ԸՆԴԱՄԵՆԸ | 26958.8 | 25351.6 | 94 |

2017թվականի ընթացքում համայնքի ավագանին գումարել է 16 նիստ, որտեղ քննարկվել են համայնքի խնդիրներին վերաբերվող տարբեր բնույթի հարցեր, և կայացվել որոշումներ:
Համայնքի ղեկավարի 2017թ. տարեկան կատարած աշխատանքները գնահատվեց բավարար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Չնայած, համայնքի բյուջեով նախատեսված է սոցիալ-տնտեսական զարգացման և որոշ ուղղություններով իրականացված միջոցառումներ, սակայն կան հիմնախնդիրներ, որոնց լուծումը հնարավոր չէ իրականացնել համայնքի միջոցներով:

ԱՌԱՋՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ԳԼԽԱՎՈՐ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՑ Է

Համայնքում կան չլուծված մի շարք խնդիրներ՝

1. Վերակառուցման խիստ անհրաժեշտություն ունի մանկապարտեզի շենքը:
2. Համայնքի ներքին ճանապարհների ասֆալտապատում մոտ 3 կմ-ի չափով:
3. Մարզահրապարակի կառուցում, հանգստյան գոտու ստեղծման հետ զուգահեռ /կա նախնական համաձայնություն COAF- ի և «ՇԵՆ» բարեգործական կազմակերպության հետ:

4. Գյուղի ոռոգման ներքին ցանցի և մայր ջրանցքի առանձին ջրագծի միացում մոտ 2.5 կմ չափով:
5. Գյուղապետարանի վարչական շենքի վերանորոգում:
6. Փոքր և միջին ջրամբարների կառուցման նպատակային վայրերի հետազոտություն:

ՇԵՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝

Կ.ՄԻՆԱՍՅԱՆ